



ԻԻՋԵՆՆ ՏՈՆԱԿԱՆՈՐ
 գերգաստանին հիմ-
 նադրին՝ ինչպէս նաեւ
 ի Աոստանդնուպոլիս հաստա-
 տուելուն մանրամասնութիւնքն,
 տակաւին մթութեան թանձր
 քօղով ծածկուած կը մնան. ու-
 րովհետեւ ծանօթ չէ թէ ո՞վ
 էր այն անձն եւ ի՞նչ իւր արդիւնքն, որ արժա-
 նացած ըլլայ Օսմանեան Աւետութեան ծառայու-
 թեան մէջ մտնելու վայրկենէն սկսեալ, իւր
 գերգաստանին ապագայ փառաւորութեան՝ այս-
 պէս ըսենք, ջահակիրն ըլլալ: Պատմութիւնը կը
 ծածկէ մեզմէ այս կարեւոր պարագաները: Բայց
 կայ՝ փոխանակ պատմութեան ստոյգ տեղեկու-
 թեանց, աւանդութեան յենարանն, որուն՝ առ ի
 չգոյէ լաւագոյն աղբեր, կը հարկադրինք հե-
 տելիլ: